

նշանաւոր մասնագիտ է և քաջ տեղակի գրգին վերաբերեալ դրականութեան: Ազգային կատարեալ դրւածք չը կաէ ոչ գերմանական և ոչ մի օտար դրականութեան մէջ: Ե՞նչ բան և ի՞նչպէս պէտք է դիտել կենդանի մարդու թէ մնաւածի վերաւ—ահա՛ առաջադրած խնդիրը: Գիրքը պարզ կեր-

պով ծանօթացնում է գործիքների հետ, որոնցով պէտք է չափել, և չափելու մեթոդների հետ անպէս, որ մասնագիտը բաւական է մնում, իսկ ոչ մասնագիտը հմտանում է գործին, եթէ միայն անսառութիւնական անուններին ծանօթ է:

8. Գ.

ՄԵՐԿԵԼ, ԴՐ. ՅՈՎՀ., ՊՐՈֆ., ՈՒՍՏԱԾՔՆԵՐ ՀՈՌՎՄԵԱԿԱՆ ԻՐԱՀՈՒՆՔԻՑ: Տետր. III. Հոռվմէական ծառայողների ոռճիկների ծագման և հոռվմէական դատարանական վճարումների մասին: Հալլէ Զալլի վերաց. 1888թ., տպ. Նիմայէր, 174 եր., մեծ ուժածալ, դինը՝ 4 մարկ:

Հատած 1-ում խօսւում է հանրապետական ժամանակի մասին (ոռճիկները քահանաներին, դինուորներին, ազգաբարխորներին և գաւառական դատաւորներին): Հատած 2-ում՝ Օդուսուսի և նորա լաջորդների կարգա-

դրութիւնների մասին: Հատած III-ը տալիս է միաևսութիւն ծառայողների ոռճիկների պարմանների մասին Դիօկլետիանոսից մինչ Յուստինիանոս:

Ա.

ԲՐՈՒԽՄԱՆ, ԴՐ. ԿՈՒՐՏ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՏԱԾՔՆԵՐ 1.ԵԶՈՒԽ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: Լապաղիդ, 1888թ., տպ. Ֆրիդրիխ, X+358 երես, մեծ ուժածալ. դինը՝ 9 մարկ:

Գիրքը անի լարաբերութիւն լիդուագիտութեան, հողերանութեան, բանաստեղծութեան և դրական պատմութեան հետ: Լեզուն շատ ծանր է, նիւթերի դասաւորութիւնը՝ խառնի միջի ալլոց հետաքրքրական օրինակներ են բերած, թէ ինչպէս ինձաստից զուրկ բառեր լեզուի մէջ

գործ են ածւում, հէնց որովհետեւ լեզուն նոյն պահպանած է: Մանաւանդ հետաքրքրելին ան մասն է, որանդ գծագրում է Հին-կատակարանի աղղեցութիւնը կրօնական բանաստեղծութեան լիզուի վերաւ մինչ մեր օրերը:

Ա.